

1.4.2 Բնակչության կենսամակարդակ, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բնակչության դրամական եկամուտները 2000թ. հունվարին կազմել են 48068.6 մլն.դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել են 23.6 %-ով: Դրամական ծախսերը նույն ժամանակաշրջանում կազմել են 46533.3 մլն.դրամ և ավելացել 4.5 %-ով: Դրամական եկամուտները գերազանցում են ծախսերը 1535,3 մլն. դրամով:

Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալից 2000թ. հունվարին ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար բնակչությունը ծախսել է 38301.7 մլն.դրամ (79.7%), պարտադիր վճարումների և կանավոր մուծումների վճարման համար՝ 1458,7 մլն.դրամ (3,0 %), ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճը կազմել է 3028,3 մլն.դրամ (6,3 %):

Դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքում 2000թ. հունվարին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճի տեսակարար կշիռը նվազել է 6,6 տոկոսային կետով, իսկ սպառողական ծախսերինը՝ 9.3 տոկոսային կետով:

Բնակչության իրական տնօրինած դրամական եկամուտները: Բնակչության իրական տնօրինած դրամական եկամուտները (եկամուտները հանած պարտադիր վճարումները, հաշվի առած ապրանքների և ծառայությունների սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2000թ. հունվարին 1999թ. հունվարի նկատմամբ աճել են 24.7 տոկոսով:

Աշխատանքի վարձատրություն: 2000թ. հունվարին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9 հազար տնտեսավարող սուբյեկտների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 19375 դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 19.8 %-ով: Ըստ որում բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4 հազար բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա կազմել է 12302 դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 23.8%-ով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը համապատասխանաբար՝ 24438 դրամ և 18.5%-ով:

1999թ. դեկտեմբերին անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		Տոկոսներով ընդամենի նկատմամբ		Տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ	
	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր
Ընդամենը	22728	18526	100	100	113.7	119.6
Արդյունաբերություն	29576	23890	130.1	129.0	107.3	111.1
Գյուղատնտեսություն	14700	13077	64.7	70.6	103.2	106.4
Անտառտնտեսություն	9347	8908	41.1	48.1	102.8	117.2
Տրանսպորտ	35143	32208	154.6	173.9	96.4	112.5
Կապ	53178	38169	234.0	206.0	171.3	119.7
Շինարարություն	34338	36767	151.1	198.5	56.9	102.8
Առևտուր, հանրային սնունդ	10789	11167	47.5	60.3	90.2	119.4
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղ-սպասարկում	24652	19286	108.5	104.1	123.2	121.7

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		Տոկոսներով ընդամենի նկատմամբ		Տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ	
	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր
Հաշվողական տեղեկատվական սպասարկում	38360	19271	168.8	104.0	90.3	122.8
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	13477	11361	59.3	61.3	141.4	129.5
Կրթություն	10955	9984	48.2	53.9	131.2	128.3
Մշակույթ	9799	9141	43.1	49.3	110.9	123.0
Արվեստ	11603	9893	51.1	53.4	112.0	122.0
Գիտություն և գիտական սպասարկում	20162	16256	88.7	87.7	101.7	123.7
Վարկավորում և պետապ	101260	58314	445.5	314.8	152.3	131.4
Կառավարման ապարատ	45835	29249	201.7	157.9	131.6	140.2
Այլ	28725	20578	126.4	111.1	135.7	137.3

1999թ. հունվար-դեկտեմբերին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների անվանական միջին աշխատավարձը տատանվել է ընդհանուր միջինի 49.3 (մշակույթ) 61.3 (առողջապահություն և սոցապ) տոկոսի սահմաններում: Անվանական միջին աշխատավարձն զգալիորեն բարձր է հատկապես վարկավորման համակարգում՝ ընդհանուր միջինը գերազանցել է 3.1 անգամ, կապի համակարգում՝ 2.1, շինարարության մեջ՝ 2.0, տրանսպորտում՝ 1.7, կառավարման համակարգում՝ 1.6, արդյունաբերության մեջ՝ 1.3 և այլ ճյուղերում՝ 1.1 անգամ:

Վերը նշված ձեռնարկություններից և կազմակերպություններից հավաքագրվող տվյալների համաձայն, 1999թ. դեկտեմբերին աշխատավարձի ժամկետանց պարտքը կազմել է նույն ժամանակաշրջանի հաշվարկած աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների (ներառյալ խթանող և փոխհատուցող վճարները) ընդհանուր գումարի 32.1%-ը և նախորդ տարվա համապատասխան ամսվա համեմատությամբ ավելացել 28.5 %-ով: Վերը նշվածն ըստ տնտեսության ճյուղերի պատկերված է ստորև բերված տվյալներով.

(տոկոսներով՝ համապատասխան ճյուղում հաշվարկած աշխատանքի վարձատրության և դրան հացասարեցված այլ վճարումների (ներառյալ խթանող և փոխհատուցող վճարները) նկատմամբ)

	1999թ. դեկտեմբեր	1998թ. դեկտեմբեր
Ընդամենը	32.1	27.2
արդյունաբերություն	36.8	50.0
գյուղատնտեսություն և անտառտնտեսություն	74.2	62.2
շինարարություն	74.4	37.4
տրանսպորտ	3.0	0.5
կապ	3.6	8.8
առևտուր, հանրային սնունդ	34.4	24.2
բնակկոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում	76.2	52.4
առողջապահություն, ֆիզկուլտուրա և սպորտ, սոցիալական ապահովություն	32.5	14.4
կրթություն	33.9	16.4
մշակույթ	46.7	21.3
արվեստ	60.3	2.9
գիտություն	50.3	17.9
վարկավորում և պետական ապահովագրություն	0	0
կառավարման մարմինների ապարատ	16.4	8.5
այլ ճյուղեր	39.9	18.9